

ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 628
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

Թերթերը՝ 168:— **Պրակները՝** 6:— **Մեծությունը՝** 20.7×16.7×1.3 սմ.:— **Նյութը՝** դեղնած հասարակ բարակ թուղթ:— **Կազմը՝** հատ կապույտ թուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հատ կապույտ թուղթ:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 148բ—166բ, 167բ—168բ:— **Տողերը՝** 18:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդարություն՝** չունի:— **Գրիչը՝** Հայկ սարկավագ Աբրահամյան, հետագայում Հայկազուն արքեպիսկոպոս (1906—1972):— **Ժամանակը՝** 1926—1928 թթ.:— **Վայրը՝** Ս. Երուսաղեմի հայոց վանք:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Պատմութիւն աշխարհաբարի մատենագրութեան:

Ներածութիւն:

Թ. 11բ.— Գրաբարի անկումը:

Թ. 15բ.— Շապուհ Բագրատունի:

Թ. 16բ.— Օրինակներ Շապուհ Բագրատունիէն:

Թ. 20ա.— Առակք (հանելուկք) — (այստեղ տրված են 34 հետաքրքիր հանելուկներ, որոնց կողքին գրված է պատասխանը—Ն. Մ.):

Թ. 22բ.— Գրիգոր Անաւարզեցի (1293—1307):

Թ. 34ա.— Կենսագրական Մխիթար Հերացի բժշկին:

Թ. 36ա.— Սմբատ Սպարապետ:

Թ. 49ա.— Սմբատ Սպարապետի (կենսագրական):

Թ. 50ա.— Թուղթ Կոստանդեայ հայոց վոր գրեաց առ Հեթում թագաւորն ի յԱստուածապատ դղեկէս ի Հայրապետական Աթոռոյս Հռոմկլայէս ի Մայրաքաղաքն Սիս ....

Թ. 58բ.— Պատմութիւն աշխարհաբարի ԺԷ-րդ դար:

Թ. 74ա.— ԺԸ. դարուն սկիզբը:

Թ. 90ա.—Աղօթքներ:

Թ. 91ա.— Դարապատում:

Թ. 108ա.— Նալեան Յակոբ պատրիարք:

Թ. 136ա.— Հ. Յովհաննէս Վ. Զօհրապեան:

Թ. 141բ.— Նոր Կտակարան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Թ. 167ա.— Յանկ

(Ձեռագրում կա անջատ չորս էջանոց մի թուղթ, որ մի շարք բաների խոնարհման մասին է):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 16ա.— 19 հոկ. 1926, Ս. Աթոռ, Երուսղ.:

Թ. 34ա.— Ս. Աթոռ, 8 նոյ. 1926, Երուսաղէմ:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № № Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից, 1981 թվականի № № Ա—Դ-ից, Է-ից, Թ—ԺԲ-ից, 1982 թվականի № № Ա-ից, Գ-ից, Ժ—ԺԲ-ից, 1983 թվականի № № Բ—Գ-ից, Է—Ժ-ից, 1984 թվականի № № Բ—Դ-ից, Ե—Զ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1985 թվականի № № Բ—Գ-ից, Է—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից և 1986 թվականի № № Գ—Դ-ից.

Թ. 48բ.— 30 նոյեմբեր 1926, Ս. Աթոռ,
Հայկ Սարկ.:
Թ. 58ա.— 4 դեկ. 1926 շբթ երկր. Ընծայման օրը,
յերեկոյի 8 1/4 անց ժամ.:
Հայկ Սարկ, Երուսաղէմ:
Թ. 73բ.— Եշբ. 13 հոկ. 1927, Եղմ.
Հայկ Սրկ. Աբրահամեան:
Թ. 89բ.— Շաբաթ 29 հոկ. 1927, Երուսաղէմ:
Թ. 107բ.— Եշբթ. 3 նոյեմբեր 1927, Երուսաղէմ:
Թ. 128ա.— Եշբ. 12 յունուար 1928:
Թ. 148ա.— Շբթ. 19 մայիս 1928, Երուսաղէմ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի առաջին երեսի վրա գրված է)
7 հոկ. 1926—1928. 19 մայիս
Գ
Պատմութն Աշխարհաբարի
Հայկ Սարկաւագ
4 դեկտ. 1926:
(Վերջում գտնվող պահպանակի վրա գրված է)
Բ.
Պատմութիւն Աշխարհաբարի
Հայկ Սարկաւագ
1926 հոկտ.
(Ձեռագրում գտնվող չորս էջանոց անջատ
թղթի վրա գրված է)
Ռամկօրէնի քննութիւնը
պատրաստեցի Եշբթի
23 յունիսի 1927 ամի
Հայկ Սրկգ.:

№ 629
ՃԱՄԲԻ ՆՕԹԵՐ

Թերթերը՝ 46:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 20.3×14.3×0.5 սմ.:— **Նյութը՝** սպիտակ հասարակ թուղթ:— **Կազմը՝** կապույտ հաստ թուղթ:— **Պահ-պանակներ՝** չկան:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա—1բ, 27բ—46ա:— **Տողերը՝** 37:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շեղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյան (1906—1972):— **Ժամանակը՝** 1961 թ.:— **Վայրը՝** Հնդկաստան (Դելհի, Կալկաթա և այլ քաղաքներ՝ Տաշքենտ ու Բեյրութ):— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.— Տաշկենտյան օրագրություն կամ
Նօթեր Տաշկենտից:
Թ. 9ա.— Մեկնում Տաշկենտից 16/4/61 թ. կեսօրվա ժամը 12-ին: Դելհիյում:
Թ. 15ա.— Կալկաթայում:
Թ. 21բ.— ա. Կալկաթա քաղաքը:
Թ. 22ա.— բ. Բնակչություն:
Թ. 22բ.— գ. Սովորոյթներ:
1. Կրոնական:
Թ. 23բ.— 2. Ողորմություն:
3. Ամուսնություն:
Թ. 25ա.— Բեյրութում:
Թ. 46բ.— Պէյրութի Ս. Էջմիածնի օժանդակող հանձնախումբ (այստեղ տրվում է յոթ ազգայինների անվանացանկը):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Կազմի շապիկի վրա գրված է հետևյալը)
Հայկազուն Արքեպ. Աբրահամեան
Ճամբու Նօթեր
1961 ապրիլի 4—1961 (մայիսի 12):

№ 630
ՏԵՏՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆՑ

Թերթերը՝ 96:— **Պրակները՝** 6, յուլաքանչյուրը 16-ական թերթից:— **Մեծությունը՝** 17.1×10.5×1.3 սմ.:— **Նյութը՝** դեղնած թուղթ:— **Կազմը՝** սև թղթով ծածկված հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական սպիտակ թուղթ:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթերը՝** 1ա—1բ, 36ա, 37ա—56բ, 71բ—72բ, 96բ:— **Տողերը՝** 16: —**Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Հայկազուն վարդապետ Աբրահամյան, հետագայում արքեպիսկոպոս (1906—1972):— **Ժամանակը՝** 1930—1955 թթ.:— **Վայրը՝** Ս. Երուսաղեմի հայոց վանք:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Սկզբի պահպանակի վրա գրված է)
Ս. Պատարագք էջ 1—111 (սկզբնական համարակալումով)
Ամուսնութիւնք էջ 111—143
Մկրտութիւնք էջ 143—190
Թ. 2ա.— Թիւք Ս. Պատարագաց:
Թ. 57ա.— Ամուսնութիւնք:
Թ. 73ա.— Մկրտութիւնք:
Ա. Տրված է կատարված Ս. Պատարագի օրը, ամսաթիվը, ամիսը և տարին, նաև եկեղեցին, վանքը և նույնիսկ քաղաքը, եթե Երուսաղեմից դուրս է: 15 հուլիսի 1930-ից մինչև 6 մայիսի 1955 թ. կատարել է 1.082 Ս. Պատարագ, որոնք արձանագրված են կանոնավոր ճշտությամբ: Չորս պատարագ էլ կատարել է 958—59 թթ. Մոսկվայում և Ս. Էջմիածնում, տեսնել թ. 36բ:
Բ. Տրված է կատարված 45 հարսանիքների ցուցակը, 23 նոյեմբերի 1930-ից մինչև 9 սեպտեմբերի 1951 թ.: Այստեղ նշված են փեսայի և հարսի անունները, տարիքն ու ծննդավայրը, երկուսի ծնողների

անունները, բնակավայրը, կբաղմունքը, հարանիքի թվականը և ամուսնացողների կուսությունը:

Գ. Տրված է 142 մկրտվողների ցուցակը: Այս մըկըրտությունները տեղի են ունեցել 5 հոկտեմբերի 1930 թ. մինչև 7 հուլիսի 1933 թ.: Այստեղ տրված են մկրտվողի անունը, ծննդյան թվականը և վայրը, ծնողների և կնքահոր անունները, ինչպես նաև մըկըրտության թվականը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա գրված է)
Հայկպուն Վրդպ. Աբրահամեան Վանեցի:

Թ. 2ա.— (Թիւք Ս. Պատարագաց) Մատուցեալ ի ձեռն Տ. Հայկպուն վարդապետի Աբրահամեան Վանեցւոյ:

Թ. 57ա.— (Ամուսնութիւնք) Ձեռամբ Տ. Հայկպուն Վարդապետի:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի վրա գրված է)
.Տեառ Խորհրդակատարութեանց (Պտրգ., Մկրտթ., Պսակ) Հ. Վ. Ա. ի:

Թ. 73ա.— (Մկրտութիւնք) ի ձեռն Տ. Հայկպուն վարդապետի Աբրահամեան, Վանեցւոյ:

№ 631
ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 580:— **Պրակները՝** 48, յուրաքանչյուրը 12 թերթից:— **Մեծությունը՝** 26×20.6×7.8 սմ.:— **Նյութը՝** դիմացկուն սպիտակ թուղթ:— **Կազմը՝** կապույտ և սրճագույն լիտերինով ծածկված բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում երկուական հաստ սպիտակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 196բ, 574ա—577բ, 580ա—580բ:— **Տողերը՝** 32:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** մանրը շղագիր:— **Ձարդագրություն՝** կան մի շարք կապգրերով բառեր, այսպես օրինակի համար՝ սկզբի պահպանակի վրա **«Օրագրութիւն»**, հաջորդ թղթի վըրա **«Ձանգակ»**, կան նաև Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայոց գերեզմանատներում գտնվող տապանաքարերի ճշգրիտ արտագրությունը: Հեղինակը մատյանում գծագրել է իր հանդիպած հնատիպ հայերեն գրքերի շապիկը, ինչպես նաև հայկական եկեղեցիների, հայապատկան հողամասերի և ծերանոցների հատակագծերը, մայրուղանց և ծառերի նկարները և այլն:— **Գրիչը** և **Ծաղկողը՝** Հայկպուն արքեպիսկոպոս Աբրահամյան (1906—1972):— **Ժամանակը՝** 1964—65 թթ.— **Վայրը՝** մեծագույն մասամբ Կալկաթա, ապա նաև կանապան այլ քաղաքներ (Բոմբեյ, Քոթայամ, Մադրաս, Սիդնի, Մելբուռն և այլն):— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վենարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակը մատյանում գրած է Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայոց եկեղեցիների, դպրոցների, միությունների, հանդեսների, տոնական օրերի և բազում այլ առիթների մասին: Նկարագրում է հնդկական հանդեսներ, տոներ, արարողություններ և այլն (օր. հարանիքը՝ թթ. 154ա—156բ): Նա մատյանում արտագրած է այս ընդարձակ երկրամասի հայկական եկեղեցիների հիշատակարանները, շիրմաքարերի արձանագրությունը, երբեմն տալով նույնիսկ գծագրությունը, եկեղեցիների և հայկական գաղութների և համայնքների պատմությունը: Հեղինակը տալիս է հնդկահայ բազում գործիչների, հոգևորականների և այլոց կենսագրությունը: Այստեղ կան հեղինակի մի շարք գեղեցիկ ոտանավորները: Այս ձեռագիր մատյանը, որ ստեղծված է Հայկպուն Սրբազանի մեծ աշխատասիրության և անհուն կրքվի ու կամքի շնորհիվ, մի տեսակ ընդարձակ հանրագիտարան է Հնդկաստանի, հնդկահայ գաղութի և Ծայրագույն Արևելքի մյուս հայկական կենտրոնների մասին, որտեղից մեծ քանակությամբ արժեքավոր նյութեր կարող են քաղել ապագա պատմաբանները: Բացի այդ, օրագրի ձևով, օրը-օրին մանրամասն կերպով գրված է նրա հանդիպումների, այցելությունների, կատարած պատարագների, խոսած բառերի, գրած և ստացած նամակների և հեռագրերի և իր ընդհանուր գործունեության մասին:

Ստորև տրվում է կարևոր գլուխների վերնագրերը.

Թ. 1ա.— Ս. Էջմիածին (27 ապրիլի 1964 թ.):

Թ. 2ա.— Մեկնում Ս. Էջմիածնէն—Մոսկուա (27 ապրիլի 1964 թ.):

Թ. 3բ.— Մոսկուա (Ապրիլ 27):

Թ. 15ա.— Այցելութիւն ի Ձակօրակ:

Թ. 16բ.— Գահիրէ (2 մայիս 1964 թ.):

Թ. 29ա.— Պոմպէյ (17 մայիսի 1964 թ.) Հոգեգալուստ:

Թ. 30բ.— Քօթայամ (20 մայիսի 1964 թ.):

Թ. 33ա.— Գահակալութիւն Մալապար եկեղեցւոյ Վասիլիոս Ուկէն Ա. Կաթողիկոսի (22 մայիսի 1964 թ.):

Թ. 35ա.— Քօթայամէն նորէն Պոմպէյ (25 մայիսի 1964 թ.):

Թ. 36ա.— Կալկաթա (3 յունիսի 1964 թ.):

Թ. 40բ.— Կալկաթայի հայոց «Մարդասիրական ձեմարանի» վերաբացումը (23, 24, 25, 26, 27 յունիսի 1964 թ.):

Թ. 44ա.— Իմ առօրեայն Կալկաթայում (3 յունիս—16 յուլիս):

Թ. 50ա.— Գանգէսի ափին:

Թ. 50բ.— Մեկնում Կալկաթայէն—Աւստրալիա (16 յուլիսի 1964 թ.):

Թ. 51բ.— Սինկափուր:

Թ. 63բ.— Աւստրալիա: Սիանի (18 յուլիս 1964 թ.):

Թ. 68բ.— Աւստրիալիոյ գաղութի կազմակերպութիւնները առ 18 յուլիս 1964, մեր ժամանման օրը:

Ա. Սիոնի:

Թ. 69ա.— Բ. Մելպըրն:
Թ. 79բ.— «Հայեր Աւստրալիոյ մէջ»:
Թ. 83ա.— Քանպերրա (12 օգոստոսի 1964 թ.):
Թ. 85բ.— Մելպուրն (14 օգոստոս 1964 թ.):
Թ. 91բ.— Մաուն Քամպիէռ (1 սեպտեմբերի 1964 թ.):
Թ. 92բ.— Ադելաիդ (2 սեպտեմբերի 1964 թ.):
Թ. 96ա.— Ադելաիդէն նորէն Մելպուրն (7 սեպտեմբերի 1964 թ.):
Թ. 102ա.— Ընդհ. ժողով եկեղեցկն. Խորհրդի ընտրութեան ի Մելպուրն (27 սեպտեմբերի 1964 թ.):
թ. 118ա.— Կարգադրութիւն Մելպուրնի Եկեղեցական Խորհուրդին:
Թ. 118բ.— Մելպուրնէն նորէն Կանպերրա (27 հոկտեմբերի 1964 թ.):
Թ. 122բ.— Կանպերրաէն նորէն Սիտնի (29 հոկտեմբերի 1964 թ.):
Թ. 145ա.— Սիտնիէն նորէն Սինկափուր (1 դեկտեմբերի 1964 թ.):
Թ. 149ա.— Սինկափուրէն նորէն Կալկաթա (5 դեկտեմբերի 1964 թ.):
Թ. 176ա.— Ձինսուրայի օրը (17 յունվարի 1965 թ.):
Թ. 178բ.— Դելհի (21 յունվարի 1965 թ.):
Թ. 182բ.— Դելհիէն—Ագրա: Թաջ-Մահալ (23 յունվարի 1965 թ.):
Թ. 184ա.— Թաջ-Մահալ:
Թ. 186ա.—Դելհիէն նորէն Պոմպէյ (24 յունվարի 1965 թ.):
Թ. 188ա.— Պոմպէէն—Մադրաս (26 յունվարի 1965 թ.):
Թ. 192բ.— Տապանաքարեր Տ. Յարութիւն քհյ. Շմաւոնեանի, Շահմիր Սո/և/թանումեան գերդաստանի:
Թ. 194ա.— Ցանկ յիշատակելի դէպքերու:
Թ. 198ա.— Մադրասէն նորէն Կալկաթա (28 յունվարի 1965 թ.):
Թ. 201ա.— Սէյտապատի ուխտի օրը (31 յունվարի 1965 թ.):
Թ. 222բ.— Կալկաթայէն նորէն Պոմպէյ, քահանայական ձեռնադրութեան համար (15 փետրվարի 1965 թ.):
Թ. 224ա.— Քահանայական ձեռնադրութիւն (16 փետրվարի 1965 թ.):
Թ. 225բ.— Պոմպէէն նորէն Կալկաթա (17 փետրվարի 1965 թ.):
Թ. 230բ.— Վարդանանց (25 փետրվարի 1965 թ.):
Թ. 233ա.— Դպրոցները վերաբացուեցան (1 մարտի 1965 թ.):
Թ. 240բ.— Հնդիկներու «Հօլի Հայ» ներկերու տօնը (17 մարտի 1965 թ.):
Թ. 253բ.— Օր Մարդասիրական ձեմարանի բացման, 1821 ապ. 2/2 ապրիլի 1965 թ.):
Թ. 261ա.— Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին և ծերանոցը (Կալկաթա) (3 ապրիլի 1965 թ.):
Թ. 263ա.— Հնդիկներու մայրերու տօն (4 ապրիլի 1965 թ.);
Թ. 273ա.— Ո՞վ էր Պուտտան:
Թ. 276ա.—Թինգրա թաղի Ս. Երրորդութեան եկեղեցին:
Թ. 280բ.— Ջատիկ (18 ապրիլի 1965 թ.):
Թ. 287բ.— Նահատակաց յուշարձանի բացումը (25 ապրիլի 1965 թ.):
Թ. 303ա.— Առաջին տարեւոր մեկնումիս Ս. Էջմիածնէն 27 ապրիլի 1965 թ.):
Թ. 305ա.—A. M. Thomas, Minister of Defence Production *մեր մէջ (29 ապրիլի 1965 թ.)։*
Թ. 313ա.— Ականատեսիս նկարագրութիւնը (Հ. Աեպ.):
Հինդուի մը հրկիզում (թաղում) (7 մայիսի 1965 թ.):
Թ. 341ա.— Պանիան ծառը:
Թ. 359բ.— A. „Armenian Church Committee"
Ա. «Հայ Եկեղեցւոյ խնամակալութիւն» կամ «Վարչութիւն»:
Թ. 364բ.— Վարչութեան կանոնագիր:
Թ. 366ա.—B. „Armenian College old boys union Calcutta"
Բ. «Կալկաթայի ձեմարանի հին սանուց միութիւն»:
Թ. 368ա.— Գ. «Հայկազեան մշակութային միութիւն»:
Թ. 368բ.— Դ. «Կալկաթայի հայ տիկնանց բարեգործական միութիւն»:
Թ. 370ա.— Ե. «Հայկական ընկերակցութիւն» (միութիւն):
„The Armenian Association".
Թ. 371բ.— Զ. «Հայ մարմնամարզական ակումբ»:
„Armenian Sports Club"
Թ 372բ.— Է. «Հայկական ակումբ»:
„Armenian Club".
Թ. 373բ.— Ը. «Կալկաթայի Հայոց Մարդասիրական ձեմարան»:
„Armenian Philantropic Academy, Calcutta".
Թ. 374բ.— Թ. «Դաւիթեան օրիորդաց դպրոց»:
„Davidian Girl's school".
Թ. 376ա.— Ողջոյնի խօսք (գիր) Աւստրալահայութեան:
Թ. 382ա.— Դպրոցներու վերաբացում:
Թ. 384ա.— Ցանկ յիշատակելի դէպքերու, Բ. Գիրք:
Թ. 386ա.— Նպարեթայ Ս. Եկեղեցին ի Կալկաթա (Պատմական ակնարկ):
Թ. 388ա.— Գիրք Գ., 1965 Յունիս 22 շար.—31 Դեկտ. 1965:
Թ. 389ա.— Մի շարք երեւելի հնդկահայերու կարճ կենսագրականները: Առանց իրենց ժամանակագրական կարգը պահելու: Կրթական մշակներ:
Ա. Տ. Յարութիւն աւ. քհյ. Շմաւոնեան:
Թ. 390բ.— Բ. Մեսրոպ Դաւիթ Թաղիադեանց:
Թ. 391բ.— Գ. Մեսրոպ Յակոբ Սէթեանց, M. R. A. S., F. R. H. S.
Թ. 392բ.— Դ. Յարութիւն Գալուստ (ըստ ոմանց՝ Գալուցեան):

Թ. 393ա.— Ե. Յովհաննէս Ավդալ:
Թ. 393բ.— Զ. Թադէոս Ստեփան:
Թ. 394ա.— Է Գէորգ վրդ. Թուրեան, M. A., D. D.
Թ. 394բ.— Ը. Սիմոն Մխիկեան:
Թ. 395ա.— Թ. Զեբեդիա Յովհ. Հանանեան:
Թ. 395բ.— Ժ. Կարիբջան Խաչատուրեան:
Թ. 396ա.— ԺԱ. Վահան Փոլատեան,
Թ. 397բ.— Հնդկաստանի առաջին հայ գաղութը.
Սուրաթ:
Թ. 402ա.— Հայ գաղութը Դելհիում:
Թ. 404ա.— Հայ գաղութը Լահորի մէջ:
Թ. 405բ.— «Սըր Խաչիկ Փօլ Չատըր», C. M. G., L. L. D., 1846—1926.
Ո՞վ էր Սըր Խաչիկ Փօլ Չատըր:
Թ. 411ա.— Հայերը Գուալիօրի մէջ (Հիւսիսային Հնդկաստան).
Քօլօնէլ Յակոբ Պետրոսը.
70 տարիներ հրամանատար Սքինդիիա բանակին:
Թ. 428ա.— Հետաքրքիր գիտելիքներ մարդկային մարմնի մէջ:
Թ. 440ա.— Հայր Ոսկան աբեղայ Գալփաքեանը ժամանեց Կալկաթայ:
Թ. 447բ.— Ամուսնութիւնների մի քանի տարօրինակ սովորութիւններ Հնդկաստանի կանայքան մասերում:
Թ. 450ա.— Տարեդարձ անկախութեան Հնդկաստանի:
Թ. 452բ.— Մեկնում Հայր Ոսկանի դէպի Աւստրալիա.
Տօն ծննդեան Լորտ Քրիշնայի:
Թ. 453բ.— Ժամանակագրութիւն Վանի հերոսամարտի Ապրիլեան կռիւները, 3 ապրիլ 1915—6 մայիս 1915:
Թ. 465ա.— Ռակպիի խաղը և հայերը Կալկաթայում:
Թ. 479ա.— Վերյիշում մը: Հրաժեշտի երեկոյ որբանոցի մեր տունէն:
Թ. 483բ.— Կալկաթայի փոքրերուն ձրի կաթի բաշխման բացման հանդէս:
Թ. 494ա.— Տէր Արամայիս աւ. քահանան ի Կալկաթա:
Թ. 494բ.— Տ. Արամայիս աւ. քահանայի Ս. Պատարագը ի Կալկաթա:
Թ. 499բ.— Կալկաթայի «Մէյտան»ը:
Թ. 502ա.— Մեկնում Տ. Արամայիս աւ. քահանայի դէպի Հայաստան:
Թ. 502բ.— Մեկնում Հնդկաստանի պատգամաւորաց դէպի Հայաստան:
Թ. 503բ.— Հինդուների պտուղներու տօնը, այսօր և վաղը:
Թ. 505բ.— Հանդիսութիւնք տասնամեայ գահակալութեան Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա Սրբազնագոյն Կաթողիկոսին Ամենայն Հայոց յԷջմիածին և ի Կալկաթա:
Թ. 512բ.— Հինդուներու «Լուացարուք Սրբացարուք»-ի օրը:

Թ. 522ա.— Հնդկաստանի գիշակեր սև ագռաւները:
Թ. 523 բ.— Հնդկաստանի սուրբ կովերը:
Թ. 524 բ.— Հինդուներու ընտանեկան ներքին կեանքը:
Թ. 534ա.— Օրդ. Րաղնա Գանգուլիի գրած շարադրութիւնը «Մեր տօները»:
Թ. 536ա.— Ընծայում Ս. Ածածնի երից ամաց ի տաճարն:
Ս. Պատարագ ի Թանգրա և 20-րդ տարեդարձ Հայ Մարմնամարզական ակումբի:
Թ. 541ա.— Այցելութիւն ի Չինսուրահ և բակար Հայ մրմմրկթ. ակումբի:
Թ. 544ա. —Մարդասիրական ճեմարանի նախկին սանուց միութեան 50-ամեակը:
Թ. 545ա.— Կալկաթայի St. Andrews Church-ի 150ամեակը:
Թ. 545բ.— Այսօր սկսանք ճեմարանի ամավերջի քննութիւնները:
Թ. 558ա.— Տ. Վազգէն քահանան մեկնեցաւ Պոմպէյ:
Թ. 559բ.— Կալկաթայէն նորէն Պոմպէյ (19 սեկտեմբերի (1965 թ.):
Թ. 562բ.— Պոմպէէն Քօթայամ:
Եւրոպացոց Ծնունդ (25 դեկտեմբերի 1965):
Թ. 563ա.—Քօթայամի Հոգևոր ճեմարանի պատմականը:
Թ. 565ա.— Հայկական պատարագ (Քօթայամում):
Թ. 570բ.— Փակման նիստ:
Թ. 571բ.— Քօթայամէն Քօչին (31 դեկտեմբերի 1965):
Թ. 578ա.— Ցանկ յիշատակելի դէպքերու, Գ. Գիրք:

ՈՏԱՆԱՎՈՐՆԵՐ

Թթ. 146բ—147ա.— Սիտնիէն Սինկափուր (40 տող):
Թ. 152ա.—Բանք աղաչանաց (12 տող):
Թ. 153բ.— օրդ. Աննէթին (7 տող):
Թ. 215ա.— Բանք յիշողականք (վերստին) (20 տող):
Թթ. 221ա—221բ.— Բանք գոհութեան (ի նորոգումըն բաղնեաց) (12 տող):
Թ. 338բ.— Բանք երաժշտութեան (16 տող):
Թթ. 338բ—339ա.— Պատասխան (16 տող):
Թթ. 358բ—359ա.— Չօն «Air Condition»-ին (20 տող):
Թ. 375բ.— «Երա՞կ» (հանգուցեալ քրոջս Զարուհիին) (20 տող):
Թթ. 377ա—377բ.— Չօն՝ Մակ Արթուրին (24 տող):
Թթ. 379բ—380ա.— Չօն՝ (Ուրարակիր) Սամ Աւետին (36 տող):
Թթ. 469բ—470բ.— Հայ ցեղի հինգ անմահ հոգիներ (65 տող);

1. ... **Եկեղեցին** ... անման **հոգին** իմ ցեղին:
2. ... Պատիւ հայու **ընտանեկան սրբութեան:**
3. ... **Հայու դպրոց.** երրորդ հոգին հայութեան:
4. ... **Հայ դպրութեան** լոյս փարոսներն իմ ցեղի:
5. ... Նոր կեանք առաւ երկիր մեր **Մայր Հայաստան: Նոր Հայրենիք,** նոր ապաւէն Հայութեան):

Կալկաթա, 7 սեպտ. 1965 (Հայկակուն Արքեպս. Աբրահամեան):

Թթ. 500բ—501ա.— Զօն ի գահակալութեան տասնամեակի

Տեառն Տեառն Վազգէնի Առաջնոյ Հայրապետին
Ամենայն Հայոց (34 տող) ակրոստիկոս
«Տ. Տ. Վազգէն Առաջին Հայրապետ Ամենայն Հայոց»:

ԶԱՆԱԶԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 173ա.— Համաստեղ (դիմանկար):

Թ. 232ա.— (Նախագիծ Եղեռնի հիսնամյակի հուշարձանի):

Թ. 247ա.— Մեր «Հաւատամք»ի ծառը իր 10ը կէտերով:

Յօրինեց և գծեց՝ Հայկակուն Արքեպս. Աբրահամեան

Կալկաթա, 25 մարտ 1965:

Թ. 330բ.— (Հիշատակի քարի արձանագրություն):

Թ. 341ա.— Պանիան՝ Հինտուներու սուրբ ծառը, որ կարող է 200 տարուան մէջ հսկայ անտառ մը դառնալ ինքնաբերաբար:

Թ. 405ա.— Բեգում Սարգիսեան՝ առաջին հայ կինը, որ կը կարծուի թէ եկած լինի Կալկաթա 1620 թվին:

Գծեց՝ Հ. աեպս. 30—6—65 թ.:

Թ. 479ա.— Հայաստան: Ծնթ. Մէկ գրիչով՝ երկու Մասիսներ և Արաքս գետ: Կալկաթա: 24—9—65: Հ. աեպս.:

Թ. 514ա— (Գրչի խաղեր)

Գրեց՝ Հայկակուն Արքեպիսկոպոս
Կալկաթա, 9 նոյեմբերի 1965:
(Ծառի կոճղերի նկարով գրված է հայերեն այբուբենը):

ԶԱՆԱԶԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐ

Թ. 204ա.— Ս'էյտապատի Ս. Աստուածածին Եկեղեցին (կառուցված 1758-ին): Լիճը, հողերն ու ծառերը:

Թ. 243ա.— Չինսուրայի Ս. Յովհաննէս—Մկրտիչ եկեղեցւոյ ընդհանուր յատակագիծը:

Թ. 261ա.— Եռայարկ ծերանոց (Կալկաթայի):

«Սըր Քաչիկ Փոլ Չէյթըր Հօմ»:

Թ. 276ա.— Ի Կալկաթա Թինգրա թաղի Ս. Երրորդութիւն եկեղեցին և գերեզմանատուն: Կառուցված 1867-ին:

Թ. 388ա.— Կալկաթայի Նպարէթայ Ս. Եկեղեցւոյ և իր շրջափակի յատակագիծը (կառուցուած 1707-ին:)

Թ. 465ա.— Ռակպիի խաղավայրը և 30 խաղցողները:

ՁԵՌԱԳԻՐ ԹՂԹԵՐ

(Մատյանում հետագայում կպցված են մի շարք ձեռագիր թղթեր, որոնցից ստորև նշվում են միայն մի քանի կարևորները):

Թ. 196բ.— Սիդնիից Մ. Տեր-Հակոբյանի գրած 1 հոկտեմբերի 1958 թ. երկու էջանոց նամակը, ուղղված Նոր Զուղայի Համայնական խորհրդի ատենապետին և անդամներին, բարի խորհուրդ տալով, որպեսզի Նոր Զուղայի թեմը չանջատվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնից և չկապվի Կիլիկիայի Կաթողիկոսության (Անթիլիաս):

Թ. 197բ.— Մեսրոպ Յ. Սէթեանցի «Armenians in India» գրքի գլուխները և էջերը:

Թ. 388ա.— Ցանկ Նպարէթայ Ս. Եկեղեցում պաշտօնավարող քահանաներուն 1793—1964: (Այստեղ տրված են 110 հոգևորականների անունները, որոնցից 107 քահանաներ են, իսկ երեքն էլ վարդապետներ):

Թ. 580բ.— Մեր տօները

Հնդկական ազգային քայլերգ (Anthem):

ՄԵՔԵՆԱԳՐՎԱԾ ԹՂԹԵՐ ԵՎ ՆԱՄԱԿՆԵՐ

(Սկզբում) Տ. Հայկակուն արքեպս. Աբրահամյանի երկու էջանոց ինքնակենսագրությունը (5—7—1964 թ.):

Թ. 51բ.— Սինկափուրի հայերը, առ 17 Յուլիս 1964 թ. (տրվում է քառասուն հոգու անունը):

Թ. 158ա.— Մեր հպօր սիրտը («Նոր օր», Գշ. Սեպտ. 15, 1964):

Թ. 170ա.— Բարեմաղթութիւններ յաւուրն Ծնընդեան,, ի ժամ Զրօրհնեաց, յատուկ Հնդկաստանի եկեղեցեաց 6 յունուար 1965

Կալկաթա Պատրաստեց
Հայկակուն Արք. Աբրահամեան

Թ. 177բ.—ա. Սօնա Դիլանջեանին (ոտանավոր 15 տողանոց) վերջում գրված է.

Ինձմէ նուէր այս աղջնակին
Չինսուրայի ուխտի օրին,
Եատէստի մէջ պարտուողին:

Կալկաթա Օրհնութեամբ
18 Յունվարի 1965 թ. Հայկակուն Արքեպս.
Աբրահամեան:

բ. Գաւազանագիրք Մալապարի Ասորական Ուղղափառ Եկեղեցւոյ առաջնորդաց և Կաթողիկոսաց 52—1964 Յ. Ք. (Այստեղ տրված է ընդամենը 22 անուն, սկսած Ս. Թովմաս առաքյալից մինչև Մորան Մար Վասիլիոս Ուկեն Ա., 1964):

Թ. 231բ.— Կոչ Հնդկահայութեան (Եղեռնի 50-ամյակի առթիվ կառուցվելիք հուշարձանի հանգանակության մասին):

Թ. 234բ.— «Մեր նահատակներուն» (Գրված է

Եղեռնի 50-ամյակի առթիվ: Բաղկացած է յուրաքանչյուրը երեք տողանոց 27 տեղերից):

Թ. 268 բ.— Հնդկաստան, Հնդիկ ժողովուրդը ու իր մի քանի կրօնական տօնախմբութիւնները (3 էջ):

Թ. 285բ.— Մեծ Եղեռնի Յիսնամեակի տօնախմբութիւնները Կալկաթայի մէջ, 24 և 25 Ապրիլի 1965 թ. (4 էջ):

Թ. 290ա.—Your Grace Lord Bishop and devout people (շնորհակալության խոսք Տ. Հայկազուն որք.ի խոսված Կալկաթայի Անգլիքան եկեղեցում 25 ապրիլի 1965 թ.) (2 էջ):

Թ. 308ա.— «Անբախտ որբուհին» վերնագրով շարադրության կմախքը: (Դասատու հայոց լեզվի՝ Հայկազուն Արքեպ.):

Թ. 388ա.— Էմին Յովսէփ. Էմին, 1726—1609 (3 էջանոց կենսագրությունը գրված Նոր Ջուղայեցի Գարեգին քահանա Կիրակոսյանի կողմից):

Թ. 557ա.— Տիկ. Ռ. Բալիլի և Արամ Եղիազարյանի Բոմբեյից գրած 11 դեկտ. 1965 թ. նամակը, ուղղված Տ. Հայկազուն Արք.ին:

ԱՆԳԼԵՐԵՆ ՄԵՔԵՆԱԳՐՎԱԾ ԹՂԹԵՐ

Թ. 52ա.— Սինգափուրի հայկական եկեղեցու պատմությունը (2 էջ), 18 օգոստոսի 1960 թ.:

Թ. 564բ—ա. The Hierarchy of the Orthodox Syrian Church *(1 էջ).*

բ. Programme: Inaugural meeting *(26—12—1965).*

գ. Քօթայամի ճեմարանի 150-ամեակի հանդիսութեանց բացման օրուան մեր կարդացած ուղերձը, կարդացուած 26—12—1965-ին (4 էջ):

Թ. 566բ.— ա. Մալաբար եկեղեցու Հովվապետ Մար Բասելիոս Օգեն Ա-ի բարի գալուստի ուղերձը (1 էջ):

բ. Հայկազուն Արք. Աբրահամյանի, Կոմիտաս Եպս. Տեր Ստեփանյանի և Գարեգին Եպս. Սարգսյանի միացյալ ուղերձը, ուղղված Մալաբար եկեղեցու Հովվապետին:

Թ. 570ա.—The Ecumenical meeting programme December 30, 1965.

Թ. 571ա.— Յայտագիր փակման նիստի, 30—12—1965:

Կոթողական այս մատյանում գտնվող վերոհիշյալ նյութերից բացի կան նաև այլ տեսակի բազմաթիվ պանապան նյութեր, այսպես օրինակի համար Հայրապետական կոնդակի տպագիր պատճեններ, զանազան հանդեսների և երեկույթների ծրագրեր և հրավիրատոմսեր, գունավոր քարտեզներ և լուսանկարներ, հայկական եկեղեցիների և հնդկական հուշարձանների նկարներ, սրբերի և հայ գործիչների լուսանկարներ, Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի շենքի նկարները, Կալկաթայի Amrita Bazar Patrika» օրաթերթի 14 հուլիսի 1965 թ. մեկ կտրոնը, որտեղ կա Բատնա Գանգուլի հնդկուհու նկարը և գրված է նրա մասին անգլերեն: Կտրոնի վրա ձեռագրի հեղինակը գրել է հայերեն հետևյալը— «Ամբողջ Հնդկաստանի մէջ միակ հնդկուհին, (Պէնկալցի) օրդ. «Բատնա Գանգուլի»ն, որ հայերէն կը սորուի» (Miss Ratna Ganguli):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Պահպանակի առաջին թերթի վրա)

Օրագրութիւն (կապգրերով) Ամենայն Հայոց Հայրապետին. Պատուիրակի Հնդկաստանի և Հեռ. Արևելքի Տ. Հայկազուն Արքեպս. Աբրահամեանի Վանեցւոյ:

27 Ապրիլի 1964—31 Դեկ. 1965

Գրեց Հ. Աեպ. Ա.

1965, 5 Յունիսի, Կալկաթա:

(Պահպանակի երկրորդ թերթի վրա)

Զանգ (կապգրերով)

Archbishop Haïgazoun Abrahamian

Apostolic Delegate for far Eastern Diocies of His Holinesa Vasken Ist. Catholicos of All Armenians in Etchmiadzin. Armenia. U.S.S.R.

(Պահպանակի երկրորդ թերթի կռնակում)

Կալկաթա, Հայկազուն Արքեպս. Աբրահամեան:

Թ. 50ա.— 11 Յվր. 1965

Նկարագրեց Հայկազուն Արքեպսկ.:

Թ. 167ա.— 1965, Կալկաթա, Ուրբաթ 1 Յունվարի 1965 թ. ԳԿ. Նոր Տարի:

Թ. 193բ.— Փառք Ամենակալին Աստուծոյ որ կեանս շնորհեաց ինձ օրագրել զամենայն դէպս և պատահմունս յայսմ երկերիր եօթանասուն և վեց աւուրց:

Նուաստ ծառայ
և պաշտօնեայ Ս. Եկեղեցւոյս Հայաստանեայց
Հայկազուն Արքեպսկ. Աբրահամեան
Ամենայն Հայոց
Կալկաթա
Հայրապետական Պատուիրակ
հեռաւոր Արևելքի:

ի 27ն Յունուարի 1965 ամի:

Թ. 196ա.— Շարունակութիւնը տես Գիրք Բ. համար 146, էջք 385:

Հայկազուն Արքեպ.:

Թ. 197ա.— Օրագրութիւն
Տ. Հայկազուն Արքեպս. Աբրահամեանի
Վանեցւոյ
Ամենայն Հայոց
Տ. Տ. Վազգէն Ա. Սրբազնագոյն Կթղկսի.
Հայրապետին. Պատուիրակ
Հեռաւոր Արևելքի
Գիրք Բ.

28 Յունվար 1965—22 Յունիս 1965:

Թ. 304ա.— (Կալկաթա, Երեքշաբթի 27 Ապրիլի 1965 թ.: Առաջին տարելից մեկնումիս Ս. Էջմիածնէն):

Դպրոցն էինք առաւօտ. պատրաստուեցանք կիսամեայ քննութիւններուն: Կը վերադառնամ տուն, և գրի կառնեմ երկու օրերու օրագրութիւններս: Եւ կը մեքենագրեմ Վեհափառ Հայրապետի Նահատակաց

նուիրուած կոնդակը ու մեր հրատարակած գրքոյկին հետ կը փակցնեմ օրագրութեանս էջերում: Ամբողջ օրը այսօր մինչև գիշերջուան ժամը 12, գրասեղանիս առջևէն չեմ ելած գրեթէ, ու ինքվինքիս հանգիստ իսկ չեմ տուած, վասնզի համոզուած եմ որ գրասեղանի աշխատանք և՛ սուրբ է և՛ քաղցր: «Ձեր գրասեղանին կապուեցէք» կըսէր մեր լուսահոգի Մեծ Դաստիարակ-Ուսուցիչը, Երանաշնորհ Բարգէն Կաթողիկոսը: Թող օրինեալ լինի իր յիշատակը. իրեն կը պարտիմ:

Հ. Աեպս.:

Թ. 356ա.— Նօթագրեց՝ Հ. Աեպս.:

Թ. 383բ.— Գոհութիւն Ամենակալին Աստուծոյ որ ինձ կեանք և առողջութիւն շնորհեց աւարտելու «Օրագրութեանս» այս երկրորդ գիրքը՝ 1965 Փետրվար 28-էն 1965 Յունիս 22:

Հայկազուն Արքեպս. Աբրահամեան
Ամենայն Հայոց
Հայրապետական Պատուիրակ
Հնդկաստանի և Հեռաւոր արևելքի երկրների
Կալկաթա, 22—6—1965:

Թ. 385բ.— Շարունակութիւնը տե՛ս Գիրք Գ: համար 267, էջ 767: Հ. Աեպս.:

Թ. 457ա.— (Հայկազուն Արքեպ.):

Թ. 533ա.— Նկարագրեց Հ. Աեպս.:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 10ա.— Մոսկուայի Գիւղատնտեսական ցուցահանդէսը:

Թ. 11ա.— Հայկական տաղաւարը ի Մոսկուա:

Թ. 76ա.— Ճաշկերոյթ ի պատիւ Հայրապետական Պատուիրակին:

Թ. 77ա.— Ծխելը ձգեցի ժամը 2-ին (3 օգոստոսի 1964 թ.):

Թ. 78բ.— Ուրարի տվչութիւն:

Թ. 95ա.— Թաղում՝ Յարութիւն Մատանեանի. 52 տարեկան:

Թ. 105ա.— Տիկ. Քիւրտեան (ի) գլխի փոքր արկածը:

Թ. 109բ.— Մեծն Աղեքսանդրի ֆիլմի ցուցադրութիւնը, թելեվիժնով:

Թ. 115ա.— Ուրար կրելու իշխանութիւն տուի 1) Գրիգոր Տէր Աւետիսեանին և 2) Հանրի Շահինեանին:

Թ. 134ա.— Ժանտախտի (քոլերայ) դէմ առաջին ասեղը ընդունեցի այսօր ժամը 10-ին:

Թ. 162բ.— Մալապար Եկեղեցւոյ Ծննդեան ճրագալոյց ի Կալկաթա:

Թ. 234բ.— Հայաստանի վարչապետը Պրն. Անտոն Քոչինեանը Կալկաթայում (4 մարտի 1965 թ.):

Ծաղկեայ նոր սև փիլոն, ընդհ. ծախք 130 ռուբի:

Թ. 236ա.— Հայաստանի վարչապետը Մարդասիրական ճեմարանում:

Թ. 280բ.— Թաղում ճօրճ Աբգարի:

Թ. 325բ.— Հանգիստ Տիկ. Մէրէ Արաթունի (Պոդոս Սրկգի. կինը):

Թ. 339ա.— Մեկնում Հայր Գեղամի Մադրաս, Պանկլոր և Պոմպէյ (10 օրով):

Թ. 425ա.— Հանգիստ Միքայէլ Սրկգ. Գասպարեանի:

Թ. 453բ.— «Վասպուրական» պարսկերէն կը նըշանակէ «վեց որդիներու երկիր»:

Թ. 457բ.— «Սևանայ վանքի աւանդութիւնը» (ճէնկիզ-խանի օրով):

Թ. 462բ.— Հոգեհանգիստ եօթներորդ աւուր Հանգ. Սահակ Արքեպս.ի (29 օգոստոսի 1965 թ.):

Թ. 479բ.— Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանը մտնելուս 42-րդ տարելիցը: Հ. Աեպ.: (26 սեպտ. 1965 թ.):

Թ. 488ա.— Կալկաթայի Նազարէթայ Ս. Եկեղեցւոյ «Գրադարանը»:

Թ. 492ա.— Ճեմարան (ի) անկարգ 3 տղոց արտաքսման խնդիր և ժողով:

Թ. 494ա.— Տէր Արամայիս Աւ. քահանան ի Կալկաթա:

Թ. 538ա.— Արևի մասնակի խաւարում (23 նոյեմբերի 1965 թ.):

№ 632
ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 384:— **Պրակները՝** 32, յուրաքանչյուրը 12-ական թերթից:— **Մեծությունը՝** 26×20.5×4.8 սմ.:— **Նյութը՝** դիմացկուն սպիտակ թուղթ:— **Կազմը՝** կապույտ և սրճագույն լիտերինով ծածկված բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական սպիտակ հաստ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** ինքնին գծավոր է:— **Գիրը՝** մանր ջղագիր:— **Զարդագրություն՝** մատյանի սկզբում թղթի վրա կապգրերով գրված է «Օրագրութիւն» բառը, ինչպես նախորդ ձեռագրում (№ 631):— **Գրիչը և ծաղկողը՝** Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյան (1906—1972):— **Ժամանակը՝** 1966 թ.:— **Վայրը՝** Կալկաթա: —**Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 Նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ստորև տրվում է կարևոր գլուխների վերնագրերը.

Թ. 1ա.— Քոչինէն—Մադրաս (1 Յունվարի 1966 թ.):

Թ. 2բ.— Մադրասէն նորէն Կալկաթա (2 յունվարի 1966 թ.):

Թ. 15բ.— Կալկաթայէն Ասանսոլ (19 Յունվարի 1966 թ.):

Թ. 21ա.— Ասանսոլէն Դանբադ, Ջհալդա և վերադարձ Ասանսոլ (22 Յունվարի 1966 թ.):

Թ. 22բ.— Ս. Պատարագ անգլիական Ս. Փոլ Եկեղեցում, Ասանսոլ (23 Յունվարի 1966 թ.):

Թ. 23ա.— Ասանսոլէն նորէն Կալկաթա (24 Յունվարի 1966 թ.):

Թ. 23բ.— Հանգուցեալ վարչապետ Շաստրիի աճիւնները Հուկլի գետին մէջ (25 յունվարի 1966 թ.):

Թ. 24ա.— Հնդկաստանի հանրապետութեան օր (26 Յունվարի 1966 թ.):

Թ. 25բ.— Մարդասիրական ճեմարանի դաշտահանդէս (28 Յունվարի 1966 թ.):

Թ. 26բ.— «Սէյդապատի օր» և Կանդիի մահ/ո/ւան տարելից (30 Յունվարի 1966 թ.):

Թ. 30ա.— Մեկնում Կոմիտաս Սրբազան/ի/ դէպի Աւստրալիա (5 փետրվարի 1966 թ.):

Թ. 31ա.— Դաւթեան Օրիորդաց դպրոցի օր (7 փետրվարի 1966 թ.):

Թ. 36ա.— Տեառնընդառաջ (14 փետրվարի 1966 թ.):

Թ. 37ա.—Նախատօնակ Վարդանանց, և այր/ո/ւած օդանաւը (16 փետրվարի 1966 թ.):

Թ. 37բ.— Տօն սրբոց Վարդանանց, 1036 վկայիցն (17 փետրվարի 1966 թ.):

Թ. 39ա.— Բուն Բարիկենդան ԴԿ (20 փետրվարի 1966 թ.):

Թ. 45ա.— Մատէ/ի/ Բաբաջանի կտակի մասին (2 Մարտի 1966 թ.):

Թ. 64բ.— Մուտն ի Վիրապ (26 Մարտի 1966 թ.):

Թ. 66ա.— Մայրական սիրտը կռունկի մէջ (30 Մարտի 1966 թ.):

Թ. 70ա.— Ծաղկազարդ (3 Ապրիլի 1966 թ.):

Թ. 73ա.— Ռտնալուայ (7 ապրիլի 1966 թ.):

Թ. 85ա.— Հնդկաստանի հայ գաղութ (20 Ապրիլի 1966 թ.):

Թ. 90բ.— Նահատակաց օր (24 Ապրիլի 1966 թ.):

Թ. 112ա.— Կալկաթայի խանութները (26 Մայիսի 1966 թ.):

Թ. 112բ.— Հնդիկների «Փեսաների օրը» (26 Մայիսի 1966 թ.):

Թ. 114բ.— Հնդկաստանի բնակչութեան աճը (30 Մայիսի 1966 թ.):

ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թ. 20ա.— Ածխահանք մը Ասանսոլում (գծեց՝ Հայկազուն Արքեպիսկոպոս, 21—1—1966):

Թ. 94ա.— «Հոքի»ի խաղը (գծված է խաղադաշտը և խաղացող երկու խմբերը):

Թ. 98ա.— Ջերմաստիճան (գծված է ջերմաչափը և տրված սանտիգրադ ու ֆարենհայդ աստիճանները) Գծ. Հ. Աեպս., Կալկաթա, 8 Մայիսի 1966:

ՄԵՔԵՆԱԳՐՎԱԾ ԹՂԹԵՐԸ

Թ. 19ա.— Շահ Աբաս Մեծի հրամանագիրը, տրուած Պարսկահայերի համար:

Թ. 66ա.— (Հայկազուն Սրբազանի տված 29 Մարտի 1966 թ. ողջույնի և օրհնության գիրը Կալկաթայի բնակիչ Կոստանդին Մնացականի Մրկտչյանին, հայերեն և անգլերեն լեզուներով):

Թ. 106ա.— (Մեքենագրված թուղթ հետևյալ բովանդակությամբ) ա.— Գերաշնորհ Տ. Հայկազուն Արքեպիս. Աբրահամեանին:

Սիրոյ, երախտագիտութեան և խորին յարգանքի ջերմ զգացումներով՝ Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի և Դաւթեան Օրիորդաց Դպրոցի Սաներից ու Սանուհիներից և զոյգ դպրոցների Տեսչից ու Ուսուցչական կազմերից:

Բարի երթ մեր սիրելի Սրբազան Հօր:

Կալկաթա, 21 Մայիս 1966:

բ.— (Այստեղ տրված է մի ոտանավոր Կոմիտաս վարդապետից)

ԻԲՐ ՁԱՐԴ

Օրէ օր	Նորէն նոր
Ձըրագ առ	Կըրակ տար
Պահէ վառ՝	Անըսպառ՝
Մըտքիդ յար	Սըրտիդ լար
Լուսատու:	Յուսատու:

Կոմիտաս Վարդապետ.

Թ. 192ա.— (Այստեղ կա հինգ էջանոց անգլերեն մի նամակ, գրված Փարիզից 10 հունվարի 1921 թ., ուղղված Հայկազուն վրդ. Աբրահամեանին և ստորագրված Գալուստ Կյուլպենկյանի կողմից, Լոնդոնում հայկական եկեղեցի կառուցելու հարցի մասին):

ՈՏԱՆԱՎՈՐՆԵՐԸ

Թ. 35բ.— (թղթի վրա մեքենագրված)

Տաղ Տեառնընդառաջի (42 տող)

Կալկաթա 14ն Փետրվարի 1966 ամի,

ի ձեռն

Հայկազուն Արքեպիսկոպոսի Աբրահամեան:

Թթ. 43բ.—44ա.— (Ոտանավոր գրված Սոնա Դիլանջյանի կողմից և նվիրված Հայկազուն Սրբազանին)

Գերագնորհ Տէր Հայկազուն

Սրբազան Աբրահամեանին

Կալկաթա 28 Փետրվարի 1966. Սօնա Դիլանջեան (39 տող, գրված է ակրոստիկոսով, տալով Սրբազանի անունն ու ազգանունը):

Թ. 44բ.— Զօն (19 տող)

Գրեցաւ ի Կալկաթա

ի 1ն Մարտ ամսոյ յամի Տեառն 1966

Հայկազուն Արքեպիսկոպոս Աբրահամեան

Ամեն. Հայոց Հայրպետ. Պատրկ. Հնդ. և Հեռ.

Արևելքի:

(Գրված է ակրոստիկոսով, տալով Սոնա Դիլանջյանի անունն ու ազգանունը):

Թ. 100բ.— Իմ իղձը այս ...

... Զօնէ ուսուցիչն

Հայկազուն Արքեպս. Աբրահամեան

(12 տող, ուղղված է իր աշակերտուհի օր. Իպարել Բարխուդարյանին, ակրոստիկոսով):

Թ. 115ա.— «Վարդանին»

(Մարգարեան) ուսնդ. Մրդարկն. ճեմարանի, ժ դասարանի.

(8 տողանոց ոտանավոր, ակրոստիկոսով, սկզբից և վերջից)
Կալկաթա, 31—5—1966
Հայկազուն Արքեպս. Աբրահամեան:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Մատյանի սկզբում գրված է)
Օրագրութիւն (կապգրերով)
Տ. Հայկազուն Արքեպիսկոպոսի Աբրահամեան,
Վանեցւոյ
Ամ. Հայոց Հայրապետական Պատուիրակ
Հնդկաստանի և Հեռաւոր Արևելքի երկիրներու
(Սկզբի պահպանակի վրա գրված է)
Գիրք Դ.
Թ. 1ա.— շար/ունակութիւն/ էջ 1151:
1966:
Թ. 14բ.— Կալկաթա, Երկուշաբթի, 17 Յունվարի 1966 թ.:
Այսօր կէսօրէ վերջ գնացի ակնաբոյժ բժիշկ Զավդօրին, աչքիս կարիկի համար բուժուելու:
Թ. 44ա.— Կալկաթա, Երկուշաբթի 28 Փետրվարի 1966 թ.:
(Գրված է աշակերտուհի Սոնա Դիլանջյանի գրած ոտանավորի ներքևում):
Շնորհակալութեամբ ընդունեցի սոյն ձօնը իմ անունիս, պահելով հեղինակի գրածի հարազատութիւնը: Ինձ համար ձօնի շարադրական գեղեցկութենէն և կատարելութենէն աւելի գեղեցիկ է հոգեկան այն կապը, որ ինքնաբերաբար ստեղծ/ո/ւած է աշակերտի և իր ուսուցչի միջև: Բառերը շարժական են, բայց հոգին, կմնայ միշտ ակնիւ և երախտագիտութեամբ լի երկուստեք ալ: Թող Աստուած անփորձ պահէ այս աղջնակը, ի պարծանս իր ծնողքին ու մեր ազգին: Հ. Աեպս.:
Թ. 44բ.— Կալկաթա, Երեքշաբթի 1 Մարտի 1966 թ.:
Ի պատասխան երէկ/ո/ւան Սօնա Դիլանջեանի ինձ ձօնած ոտանաւորին, այսօր իմ կողմէ իրեն ձօնեցի սոյն գրաբար ոտանաւորը:

Առ հոգևոր մեր Որդի պայապատ,
Դիլանջեան Սօնա դուստր հարազատ:
Բանիս մեր նախնեաց, Ոսկւոյ
բարբառի,
Տամ ես քո ձօնիդ զայս պատասխանի:

(Տրվում է ՀՕՆ վերնագրված ոտանավորը, 15 տողանոց, գրված ակրոստիկոսով «Սօնա Դիլանջեանին»):
Գրեցաւ ի Կալկաթա
ի 1 Մարտ ամսոյ յամի Տեառն 1966
Հայկազուն Արքեպս. Աբրահամեան
Ամեն. Հայոց Հայրապ. Պատրկ. Հնդ. և Հեռ. Արևելքի:
Թ. 97բ.— (Հեղինակը գծած է մի ջերմաչափ, որի ներքևում ստորագրած է այսպես)
Գծ. Հ. Աեպ.
Կալկաթա, 8 Մայիսի 1966:
Թ. 100բ.— (Աշակերտուհի Իպաբել Բարխուդարյանին նվիրված մի ոտանավոր է գրել հեղինակը և վերնագրել այսպես. «Իմ իղձը այս...», 12 տողանոց, ակրոստիկոսով: Ներքևում գրված է)
Ձօնէ ուսուցիչն
Օրհնութեամբ
Հայկազուն Արքեպս. Աբրահամեան՝
Ամեն. Հայոց Հայր. պատրկ. Հնդկաստանի և
Հեռ. Ար. երկրների:
Թ. 110ա.— (Հեղինակը 22 մայիսի 1966 թ. դիտել է հնդկական մի կինոժապավեն «Ուր բարեպաշտ կին մը. այնտեղ Աստ/ո/ւած» վերնագրով և այն նկարագրել է թթ. 107ա—110ա: Վերջում գրել է)
Լեզուն Բենկոլերէն: Նկարագրեց
Հայկազուն արքեպս.:
Թ. 115ա.— Ձեմարանի Ժ. դասարանի լաւագույն ուսանողը Վարդան Մարգարեանը խնդրեց իր «ինքնագրութեան» տետրակին մէջ իմ կողմէս յիշատակ մը, ու գրեցի հետևեալը:
«Վարդանին»
(8 տողանոց ոտանավոր, գրված ակրոստիկոսով, տողերի սկզբից, ինչպես նաև վերջից):
Օրհնութեամբ՝
Ձօնէ ուսուցիչն
Հայկազուն Արքեպս. Աբրահամեան
Կալկաթա, 31—5—1966:
Թ. 192ա.— Գիրք Ե.:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Տրվում է մի մասը միայն)
Թ. 5ա.— Ս. Ծնունդ (6 Յունվարի 1966 թ.):
Թ. 7ա.— Ս. Պատարագ ի Թինգրա (9 Յունվարի 1966 թ.):
Թ. 9ա.— Մահ վարչապետ Հնդկաստանի Լալ Պահադուր Շաստրիի (11 Յունվարի 1966 թ.):
Թ. 12բ.— Հինդուներու ջրով մեղքերէն սրբուելու տօնը (Մկրտութի՞ւն)—(14 Յունվարի 1966 թ.):
Թ. 14ա.— «Չինսուրայ օր» (16 Յունվարի 1966 թ.):
Թ. 15բ.— Տիկ. Ինդիրա Կանդին վարչապետ (19 Յունվարի 1966 թ.):
Թ. 33ա.— Տէր և Տիկ. Զօ-Էլիզի Ստիֆընի և Տէր և Տիկ. Սուլի Հելէն-Զոհաննէսի տուներու ողբերգութիւնը (11 փետրվարի 1966 թ.):
Թ. 37ա.— (Քահանայական օծման տարելից Տ. Վազգէն քիյի. Պոմպէի): Նախատօնակ Վարդանանց և այր/ո/ւած օդանաւը (16 փետրվարի 1966 թ.):
Թ. 47բ.— Ժամանում Աւստրալիայէն Կոմիտաս Սրբազանի (4 Մարտի 1966 թ.):
Թ. 68բ.— Ապրիլ 1-ի խաբէութեան պատմականը (31 Մարտի 1966 թ.):
Թ. 79բ.— Կալկաթայ/ի/ Մարդասիրական ձեմարանի կանոնագրքի կարճ պատմականը (13 Ապրիլի 1966 թ.):
Թ. 92ա.— Ժամանում Տէր և Տիկին Սերգեյ-Լիդիա Մերկելեաններին՝ Կալկաթա (26 Ապրիլի 1966 թ.):
Թ. 99ա.— Պրոֆ. Սերգեյ Մերկելեանի դասախո-

սութիւնը Սարդասիրական ձեմարանին մէջ, Կալկաթա (10 Մայիսի 1966 թ.):

Թ. 102բ.— Հրաժեշտը Ս. Պատարագ և քարոզ, Կալկաթա (15 Մայիսի 1966 թ.):

Թ. 105ա.— Ա. ձեմարանի ամառ/ո/ւան արձակուրդը սկսաւ այսօր:

Բ. Արևի մասնակի խաւարում այսօր երեկոյան ժամը 4.02—5.52.

Գ. Մեծ ակումբի վերջին ընթրիքը (20 Մայիսի 1966 թ.):

Թ. 106ա.— Հրաժեշտի հաւաքոյթ ձեմարանի դաշտի վրայ (21 Մայիսի 1966 թ.):

Թ. 119ա.— Հրաժեշտի այցելութիւն Բենգալի կառավարչուհի Օրդ. Պաթմաջա Նայդուիս (9 Յունիսի 1966 թ.):

Թ. 119բ.— Հրաժեշտի ընթրիք Հայկական ակումբում (10 Յունիսի 1966 թ.):

Թ. 120բ.— Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի (12 Յունիսի 1966 թ.):

Թ. 121բ.— Մեկնում Կալկաթայից դէպի Դելհի (14 Յունիսի 1966 թ.):

№ 633
ԽԱՉԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 333:— **Պրակները՝** 33, յուրաքանչիւրը 10-ական թերթից:— **Մեծութիւնը՝** 27.1×21×3.7 սմ.: — **Նիւթը՝** դեղնած թուղթ:— **Կազմը՝** սև լիտերինով ծածկված ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական դեղին հասարակ թուղթ:— **Վիճակը՝** լաւ:— **Գրութիւնը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 5ա—7ա, 9ա—9բ, 247բ—251բ, 313ա—313բ, 320բ—333բ:— **Տողերը՝** 25:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր և հայկական նոր խաչեր:— **Զարդագրութիւն՝** չունի:— **Գրիչը՝** դպրապետ Գրիգոր Հ. Մխաչյան, հետագայում Տ. Հակոբ քահանա (1889—1954 թթ.):— **Ժամանակը՝** 1919 թ.:— **Վայրը՝** Կ. Պոլիս:— **Ծանոթագրութիւն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 29 ապրիլի 1983 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն ձեռագիրը պարունակում է Հայ Եկեղեցու տաղերը, կանոնները, աղմոսները, մեղեդիները և շարականները:

Թ. 1բ.— Շարականք և սաղմոսք ի պէտս քահանայակոչութեան աւուրց:

Թ. 2ա.— Ալէլուքներու ցուցակն է:

Թ. 2բ.— Ս. Ծննդեան ճրագալոյցի գիրքերն են:

Թ. 3ա.— Ս. Զատկի ճրագալոյցի գիրքերն են:

Թթ. 7բ.—312բ.— (Ձեռագրի սմբողջ տեսքն է.):

Թթ. 314ա—320ա.— Ցանկ գրուածոց:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 3բ.— Կանոնագիր Դպրաց դասու ի պէտս Կ. Պոլսոյ եկեղեցեաց:

1. Դպրաց դասը կանոնաւոր կազմութիւն ունենալու համար գոնէ 10 դպիր անդամներ պէտք է ունենայ:

2. Դպրաց դասու անդամ ըլլալու համար պէտք է

ա. Գոնէ 15 տարեկան ըլլալ.

բ. Նախակրթական ուսում ունենալ.

գ. Եկեղեցական երգեցողութեանց և արարողութեանց գոնէ տարիէ ի վեր յաճախած և վարժուած ըլլալ.

դ. Պարկեշտ վարքով և կանոնաւոր կենցաղով ապրած ըլլալ.

ե. Դպրաց դասու տնօրէն խորհրդոյ կողմէ ընդունուիլ:

3. Անոնք, որ տակաւին վարժութեան համար կամ լոկ պատահաբար եկեղեցական երգեցողութեանց կը մասնակցին, դպրաց դասուն ոչ թէ անդամներ՝ այլ ընկերակիցներ կը համարուին:

4. Դպրաց դասուն մէջ երիցագոյն կը համարուին անոնք՝ որ 25 տարին լրացուցած են, 5 տարի դպրաց դասուն անդամակից եղած են, եկեղեցական երգեցողութեանց վկայական ստացած են, կամ գոնէ իբր քաջավարժ կը նկատուին:

5. Դպրաց դասեր իբր պատ/ո/ւոյ անդամակիցներ՝ կընդունին և կ'արձանագրեն այն անձերը, որք արտաքին միջոցներով դպրաց դասուն զարգացման կը նպաստեն: Պատ/ո/ւոյ անդամներ մասնակից են դպրաց դասուն կողմէ կատարուած պաշտամանց, հոգևոր արդեանց և հանդիսական պատուասիրութեանց:

6. Դպիրք պարտաւոր են պահ տրուելիք իրենց գոյքերը յանձնել շապկապահին, որուն կողմանէ տրրուած աւուր պատշաճի շապիկը (Թ. 4ա) հագնելով՝ անմիջապէս ներս մտնել և երգեցողութեան մասնակցիլ: Գոնէ հանգստեան շարականի ներկայ գտնուիլ **անպատճառ:** Թերներին տգեղ կերպով երերցնելով չի քալել և ուժով չի կոխել: Ինչ որ ալ ըլլայ, սեղանին վրայ ցատկելով կամ վազելով չելլել և չիջնել հոնկէ: Ձեռքի կատակ չընել, եռին՝ **ժողովուրդին չի դառնալ.** անպատշաճ կերպով չի կենալ կամ չի նստիլ, իրարու հետ չի խօսիլ, չի խնդալ, քաղաքավարութեան պայմանները յարգել, և վերջապէս ժողովրդեան գայթակղութիւն և դպրաց դասուն պատուոյն սղարտ բերող ոեէ ընթացքէ զգուշանալ:

7. Շապիկ հագնելով անգամ մը ներս մտնելէ վերջ այլևս դուրս չելլել՝ բացի հարկեցուցիչ պարագաներէ: Պահարանը կամ աւանդատունը և կամ **դպրաց սենեակը չի նստիլ, բակը չի դեգերիլ, և շապիկով չի ծխել:** Հասակի կարգով կենալ՝ առ ի վայելչութիւն, եկեղեցւոյ աւարտումէն վերջ, առանց բակը դեգերելու՝ անմիջապէս կամ մեկնիլ և կամ դպրաց սենեակը հաւաքուելով՝ կարևոր խօսակցութիւններով՝ քաղաքավար և լուրջ կերպով քիչ մը խօսելէ և յոգնութիւն առնելէ յետոյ մեկնիլ:

8. Ինչպէս երաժշտապետին ու տնտր օգնականին, նոյնպէս անոնց բացակայութեանը՝ երեց անդամին հրամաններուն հնազանդիլ անպայման: Ս. Սեղանին և քարոզիչ հօր՝ (այս վերջնոյն բացակայութեանը՝

աւագերէցին՝ կամ երիցագոյն քահանային) առջևէն անցած ատենին ամեն անգամ խոնարհութիւն ընել ակնածանօք:

9. Իրենց սպասարկութեան նուիրական ու վսեմ պաշտօնը բարձր, և դպրաց դասուս անունը անաղարտ պահելու համար, առտնին կեանքերնուն մէջ ալ զգուշանալ գայթակղութիւն պատճառող ամէն տեսակ արարքէ:

Թ. 4բ.— 10. Այս բոլոր անհրաժեշտ պայմաններուն հակառակ, անվայել կենցաղ ունեցող դպիրներ, դպրապետէ կ'ապդարարուին, տնօրէն խորհուրդէ կ'ապաստանուին և յետոյ երրորդուած պահուն՝ ժամանակաւոր զրկման և կամ մերժման պատժոյն կ'ենթարկուին: Նոյն խստութիւնն կը գործադրուի նաև անոնց նկատմամբ՝ որք սիրոյ և համերաշխութեան դէմ կը մեղանչեն, **դպրաց դասուն մէջ որոմ կը ցանեն,** և կամ դպրութեան պաշտօններուն և պարտաւորութիւններուն կանցառու կը գտնուին:

11. Դպիրք առ հասարակ, ինչ պաշտօն և աստիճան ալ ունենան, **պարտաւոր են եկեղեցի յաճախել** և երգեցողութիւններ կատարել կիրակի և տօն օրերը, և ըստ կարի նաև լուր օրեր, քանի որ օրինաւոր արգելք մը չունին:

12. Դպիրք պարտաւոր են որոշեալ օրեր և ժամեր իրենց սենեակը յաճախել և դասապետ ուսուցչին առաջնութեամբ վարժութիւններ ընել և այսպէսով **երգեցողութեան** և մանաւանդ **ձայնագրութեան մէջ յառաջանալ:** Մասնաւորաբար յանձնարարելի է, որ դպիրք եկեղեցական կարգաց և կանոնաց և ծիսական գրեանց և յատկապէս տօնացոյցի կիրառութեանց վարժ ըլլան:

13. Դպրաց դասուս անդամ չեղողներ իրաւունք չունին երբեք շապիկ հագնելու, իսկ հիւր դպիրներ կրնան երաժշտապետի և կամ տնօրէն խորհրդոյ անդամներու հրաւէրով միայն շապիկ հագնելով՝ երաժշտապետին հրահանգներուն համաձայն մասնակցիլ երգեցողութեանց:

1919 Մայիս 15 Երաժշտապետ
Պոլիս: Գրիգոր Յ. Մխեճեան:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Մատյանի կազմի վրա փակցված թղթի վրա գրված է)

Այս երեք հատորները պարունակող Հայց. եկեղեցւոյ բոլոր կանոնները, տաղ և մեղեդիները, երգերը ամփոփած, դասաւորած և գրի առած է պոլսական Համբարձումեան ձայնանիշերով, հմուտ շարականագէտ հանգուցեալ Տ. Յակոբ Ա. քհնյ. Մըխճեանը:

Ղրկուած Հայաստան
Երէցկին Տիգրանուհի Մխճեանի կողմէ.
Ձեռամբ Տ. Արաքսի Կարապետեանի
Հոկտ. 2, 1972, Worcester, Mass., U.S.A.

(Կազմի ներսի կողմը կպցված է մատյանի հեղինակի փոքրիկ լուսանկարը և մեքենագրված կենսագրականը: Նույնը տեսնել Մայր Աթոռի Ձեռագրատան № 522 մատյանում: Այն հրատարակված է «Էջմիածին» ամսագրում՝ 1982 թ., նոյեմբեր—դեկտեմբեր միացյալ համարում, էջ 69—70):

(Շարունակելի)